«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՈՒսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

ՀԵՂԻՆԱԿ Զարինե Ժորայի Ղարիբյան

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ 6-րդ խումբ, Հայոց լեզու և գրականություն

ՂԵԿԱՎԱՐ Արմինե Ալբերտի Ղազարյան

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն ---------- 3

Գլուխ 1: Ուսուցչի համագործակցությունը սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի հետ՝ որպես սովորողի առաջադիմության ու զարգացման նախապայման ---------- 4

Գլուխ 2: Ծնողական ժողովների դերն ու նշանակությունը ----------7

Գլուխ 3: Ծնող-ուսուցիչ փոխադարձ համագործակցության մեր փորձից ----------13

Եզրակացություն ----------15

Օգտագործված գրականության ցանկ ----------18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Ուսուցիչ պարոններ և քույրեր, զգուշությամբ ու երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին. խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը։Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է։ Սխալ ուղղությամբ՝ազգ մը կխորտակեք վերջը>>։

Կոմիտաս

<< Մտքի ուսուցիչը դպրոցում է, հոգու ուսուցիչը՝ ընտանիքի ծոցում>>։

Լամարթին

<<Երեխաները երկրի բնական ծաղիկներն են,իսկ այդ ծաղիկներն առաջին հերթին աճեցնում են ընտանիքում՝ ծնողները>>։

Գորկի

Դաստիարակությունը կրթության կարևոր բաղադրիչներից է։ Ինչպես ասել է Բելինսկին, <<Դաստիարակությունը մեծ գործ է, նրանով է վճռվում մարդու ճակատագիրը>>։ Յուրաքանչյուր անձի ձևավորման, ֆիզիկական և մտավոր զարգացման գործընթացում ընտանիքը, ծնողներն ունեն անփոխարինելի դեր. այս միջավայրում է տեղի ունենում երեխայի առաջնային սոցիալականացումը, ձևավորվում դերային և վարքագծային կարծրատիպերը, արժեքային կողմնորոշումներն ու աշխարհայացքը։ Առաջին հերթին ծնողներն են հոգ տանում երեխայի անվտանգության, կարիքների մասին, կրթում ու դաստիարակում նրան,հոգեբանական աջակցություն ու հարմարավետություն ապահովում։ Հետևաբար բարդույթներից զերծ,հոգեբանորեն կայուն, հասարակության պահանջներն ընկալող և դրանց համարժեք արձագանքելու ունակ անձի ձևավորման առաջնային նախադրյալը բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ ու հոգեբանական և սոցիալական խնդիրները հաղթահարելու կարողություններ ունեցող, դաստիարակչական և սոցիալականացման գործառույթներ իրականացնող,երեխայի իրավունքները,նրա հանդեպ պարտականությունները գիտակցող և դրանք կյանքի կոչող ընտանիքի առկայությունն է։Հայ ժողովրդի համար ընտանիքը սրբություն է, ավանդույթների,մշակույթի դաստիարակության և այլ բազմաթիվ հատկանիշների կրողն ու փոխանցողը։Ընտանեկան դաստիարակությունը շարունակական է,որի դերի բարձրացումն ավելի շատ կախված է դպրոցից։Ընտանիքի և դպրոցի համագործակցության կենտրոնում սովորողն է, ով իր կրթության և զարգացման գլխավոր դերակատարն է թե ընտանիքում,թե դպրոցում։Եթե դպրոցը ու ծնողները հաջողությամբ համագործակցում են, ինչն իր հերթին հանդիսանում է սովորողի կրթվելու և զարգանալու վճռորոշ տարր, ապա հաղթանակն ապահովված է։Այն սերմերը, որոնք ցանվել են ծնողների կողմից,կարող են հավասարապես բողբոջել դպրոցական միջավայրում՝դասարանի, թիմի,ուսուցիչների և դասղեկի

ազդեցության տակ։Այդ իսկ պատճառով պետք է իրականացնել համագործակցություն ուսուցչի և սովորողի ընտանիքի հետ։Եվ այդ համագործակցությունը գնալով դառնում է ավելի արդիական և պահանջված։Կյանքի՝ մարտահրավերներով լի ժամանակակից շրջափուլում սովորողի կրթական կարիքների ապահովման շրջանակներում ծնող-ուսուցիչ հաստատուն կապը ունակ է մեծապես ազդել սովորողի ուսումնառության որակի բարձրացման վրա։Մեծաքանակ աշակերտներով դասարաններում ժամանակի սղության պատճառով հնարավոր չի լինում անհրաժեշտ ուշադրություն դարձնել, բոպեներ տրամադրել այս կամ այն աշակետի գիտելիքների հիմնովին ստուգմանը՝ անկախ նրա առաջադիմությունից, ակտիվությունից և այլնից։ Այստեղ է, որ առաջին պլան է մղվում ուսուցիչ-ծնող փոխհամագործակցությունը՝ միասնական ուժերով վատթարագույն տարաբնույթ երևույթները արմատախիլ անելու և գոնե դրական անհրաժեշտ նվազագույնը սերմանելու նպատակով։

Հետազետական աշղատանքիս նպատակներն են՝ կապ ստեղծել դպրոցի և սովորողի ծնողի միջև, ներգրավել ծնողին դպրոցական գործընթացում, համագործակցել ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ժամանակ, ներգրավել դասարանական, համադպրոցական, արտադասարանական միջոցառումների, ցույց տալ ծնող-ուսուցիչ արդյունավետ փոխգործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության ու դաստիարակության գործընթացում։

Հետազոտական աշխատանքիս խնդիռներն են՝ ուսումնասիրել և բացահայտել ուսուցչի և սովորողի ծնողի փոխադարձ համագործակցության ընթացքում առաջացող դժվարությունները, առաջարկել նոր լուծումներ։Շատ ճկուն և հմուտ պետք է լինի մանկավարժը, որպեսզի կարողանա ծնողին դարձնել իր խորհրդատուն, համախոհը և գործընկերը։Ակնհայտ է, որ կրթադաստիարակչական գործընթացի իրականացման գլխավոր մասնակիցներն են դպրոցն ու ընտանիքը։

ԳԼՈՒԽ 1 . ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂԻ ԿԱՄ ՆՐԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԵՏ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

<<Բոլոր երջանիկ ընտանիքները նման են իրար, յուրաքանչյուր դժբախտ ընտանիք դժբախտ է յուրովի>>։

Լ. Տոլստոյ

Ընտանիքը, որպես կրթական կոլեկտիվ, ունի մի շարք առանձնահատկություններ։Առաջին հերթին այն կոլեկտիվ է՝ միավորված ոչ միայն ընդհանուր նպատակով, այլև ազգակցական կապերով։Ծնողական

զգացմունքները, ծնողական սերը մի տեսակ կատալիզատոր են, որոնք արագացնում են անձի զարգացումը։Սա համեմատաբար կայուն թիմ է, որտեղ շփումը տեղի է ունենում անընդհատ,հնարավոր ամենալայն տարածքներում,տարբեր գործողություններում։ Ընտանիքում է դրվում և ապահովվում անհատականության կարևորագույն գծերի դաստիարակությունը։Դրանում սովորողը ստանում է աշխարհի մասին առաջին պատկերացումները, այստեղ ձևավորվում է հասկացությունների, հայացքների զգացմունքների,սովորությունների ֆոնդը, որն ընկած է անհատի բարոյական ձևավորման հիմքում։Միայն ընտանիքում է հնարավոր ստեղծել և վերարտադրել իսկապես ազգակցական հարաբերությունների մշակույթ, տիրապետել սոցիալական կարևորագույն դերերին,ձևավորել մշակույթ, հարստացնել բարոյական փորձը։Ընտանիքը կոչված է ապահովելու երեխայի կյանքի ողջամիտ կազմակերպումը,օգնելու յուրացնել ավագ սերունդների կյանքի և աշխատանքի դրական փորձը, կուտակել գործունեության , սովորությունների , հարաբերությունների առաջավոր անհատական փորձ։Ծնողների հետ փոխգործակցությունը դպրոցի և յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում հրատապ և բարդ խնդիրներից է։<<Ընտանիքները շատ տարբեր են, յուրաքանչյուրն ունի իր խնդիրներն ու դժվարությունները,ուստի հնարավոր չէ պատրաստի և միակ ճիշտ պատասխանը տալ այն հարցին,թե ինչպես շփվել ընտանիքի հետ>>։Սեմյոնով

Շատ բան կախված է ուսուցչի հմտությունից, ով պետք է վերլուծի տարբեր հանգամանքների համալիրը, որպեսզի ճիշտ որոշում կայացնի տարբեր իրավիճակներում ծնողների և սովորողների հետ շփվելու մեթոդների և միջոցների ընտրության հարցերում։

Ծնող-ուսուցիչ կապի պահպանումը ուսումնական գործընթացում աշակերտի հաջողության բանալին է, իսկ ծնողների և դպրոցի միջև կապի բացակայությունը,ինչպես նաև դպրոցի ու ծնողների չհամաձայնեցված գործողությունները վնասում են երեխայի կրթությունն ու դաստիարակությունը։ Երկկողմանի համագործակցության շնորհիվ կարելի է սովորողի համար ապահովել այնպիսի կրթական միջավայր, որտեղ վերջինս իրեն կզգա պաշտպանված ու կարևոր։Ծնող- ուսուցիչ համագործակցությունն իր դրական ազդեցությունն է ունենում սովորողի առաջադիմության, արժեհամակարգի ձևավորման, հաջողություններ և հաղթանակներ ունենալու վրա։Ծնողների և ընտանիքների ներգրավումը իրենց երեխաների կրթության գործում արժեքավոր ներդրում է ցանկացած ծրագրի համար։Ընտանիքին յուրաքանչյուր երեխայի կրթության իմաստալից մասը դարձնելու համար ուսուցիչը պետք է՝

. ծնողներին և ընտանիքներին դիտի որպես գործընկերներ

. կանոնավոր կերպով հաղորդակցվի նրանց հետ

.հրավիրի ընտանիքներին իրենց մասնակցությունը բերելու ծրագրին

.ընդլայնի աջակցությունը ընտանիքներին՝տնային պայմաններում ուսմանը նպաստելու նպատակով

.աջակցի ընտանիքներին ռեսուրսներից և ծառայություններից օգտվելու հարցում:

Արդյունքում սովորողը միշտ կլինի ուշադրության կենտրոնում,կլինի կառավարելի և որոշակի խնդիրների առկայության դեպքում հեշտությամբ կլուծի իր առջև ծառացած խնդիրները:Ուսուցիչը կարող է նաև համագործակցության արդյունքում օգնել սովորողի ծնողին ցանկացած կոնֆլիկտային իրավիճակում:Հետազոտությունները ցույց են տվել, որ սովորողները ավելի լավ են սովորում դպրոցում, երբ ծնողը կամ օրինական ներկայացուցիչը ներգրավված է ուսումնական գործընթացին:<<Ծնողների ներգրավվածություն>> տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը,այնպես էլ դպրոցում:Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի առաջադիմության բարելավմանը: Երբ ծնողը ներգրաված է զավակի կրթության գործընթացում, աշակերտը ունի ավելի բարձր առաջադիմություն, այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, սովորողի մոտ զարգանում են սոցիալական շատ կարևոր հմտություններ, ևնրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք շատ կարևոր գոծոններ են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում :Ծնողները տեղեկացված են լինում իրենց երեխաների կրթական կարիքների մասին նխրախուսում են ներգրավվելը: Ծնող-դպրոց կապը ավելի կամրապնդվի, եթե հաճախակի հրավիրվեն ծնողական ժողովներ, հանդիպումներ, խորհրդատվություններ,տարբեր հետաքրքրաշարժ միջոցառումներ:Այդ կերպ էլ ավելի կզարգացնենք,եթե օգտագործենք ժամանակակից տեխնոլոգիաներ:Օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները (համակարգիչ,հեռախոս)կարելի է ծնողների հետ քննարկումները կատարել հեռավար:Տեխնոլոգները հնարավորություն են տալիս երեխայի կրթական կարիքները և ուսման առաջադիամության կամ կարգապահական խնդիրների մասին տեղեկանալ ավելի շուտ:ՈՒսուցիչը, օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները, կարող է աշակերտի առաջընթացի մասին հաշվետվություն ուղարկել տուն շաբաթական կամ ամսական մի քանի անգամ. սա ծնողներին տալիս է սովորողի գիտական առաջընթացի մասին շոշափելի վկայություններ:

ԳԼՈՒԽ 2: ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ծնողական ժողովը ուսուցիչ-ծնող փոխադարձ համագործակցության ձև է:Ծնողական ժողովները կարող են լինել՝

.համադպրոցական

.դասարանական

.թեմատիկ

.կազմակերպչական

1.ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այս ժողովներին հրավիրվում են դպրոցի բոլոր սովորողների ծնողները և քննարկվում են այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են բոլորին և ունեն համադպրոցական նշանակություն՝ հաշվետվություններ, դասագրքերի վարձավճարներ, համազգեստներ և այլն:Այստեղ առավել կարևոր է շեշտը դնել համադպրոցական հարցերի քննարկման, արտադասարանական աշխատանքների մեջ ծնողների ներգրավվածության վրա՝ հաշվի առնելով նրանց կարծիքն ու նրանց տալով ընտրության հնարավորություն՝ էքսկուրսիաներ, շաբաթօրյակներ, միջանցքի կամ դահլիճի ձևավորում և այլն:Որքան ծնողը շատ ժամանակ անցկացնի դպրոցում, այնքան սովորողը ծնողին անընդհատ դպրոցում տեսնելով՝ իրեն ավելի ոգևորված և արժևորված կզգա:

2.ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այս ժողովներին հանդիպում են ուսումնական գործընթացի երկու կողմերը՝ մանկավարժներ և ծնողներ, որպեսզի քննարկեն ու լսեն երրորդ կողմի՝ սովորողների խնդիրները: Այս ժողովները կազմակերպվում են դասղեկների կողմից և հիմնականում դասարանում սովորողների առաջադիմությունը քննարկելու և ամփոփելու նպատակով:Որոշ ծնողներ, ծանոթ լինելով իրենց երեխայի ցածր առաջադիմությանը, խուսափում են մասնակցել ծնողական ժողովներին, ինչը ինքնին շատ սխալ մոտեցում է: Երբեմն այդպիսի ծնողական ժողովները վերածվում են <<լավ>> և <<վատ>> գնահատականներ ունեցող սովորողներին գովելու կամ նախատելու գործընթացի, որն էլ իր հերթին շատ հաճախ ավարտվում է ծնողների դժգոհությամբ: Նման դեպքերում պետք է խուսափել և թույլ չտալ ներքոհիշյալ սխալները.

. համեմատել մի սովորողին մյուսի հետ

. բացասական գնահատական տալ ողջ դասարանին

. կարևորել որևէ առարկան

. նախատել որևէ ծնողի բոլորի ներկայությամբ։

Լուրջ խնդիր է՝ զարգացնել թե ծնողի, թե ուսուցչի ինքնագիտակցությունը, պատասխանատվությունը սովորողների նկատմամբ և կարողանալ լավ ճանաչել երեխաներին։Ծնողներն ու ուսուցիչները նույն սովորողների դաստիարակներն են և ունեն ընդհանուր նպատակներ։Հետևաբար, որպեսզի սովորողի կրթության կազմակերպումն ու առօրյան լինեն լիարժեք, իսկ դաստիարակությունն՝ առավել արդյունավետ, անհրաժեշտ պայման է ծնող- ուսուցիչ սերտ կապը և փոխադարձ համագործակցությունը։Դպրոցը սովորողին տալիս է գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք։Իսկ ընտանիքը ապահովում է կյանքի պրակտիկ փորձը։ Սովորողի ներդաշնակ զարգացման համար վերոնշյալ որակները խիստ անհրաժեշտ են։ Ընտանիքի և դպրոցի բարեկամական հարաբերություններից սովորողները միայն շահում են։Սովորողի դաստիարակության գործընթացում առավել ազդեցիկ ուժը սեփական օրինակն է իր ուսուցչի և ծնողի։Կրթության կազմակերպման հարցում ծնողների ակտիվ մասնակցությունն ապահովելու համար առաջարկում եմ թույլ տալ,որ ծնողները մասնակից դառնան դասավանդմանը՝օգտագործելով իրենց մասնագիտական գիտելիքները և նախօրոք ծանոթանալով սովորողի ուսումնական նյութին։Իրենց ծնողներին տեսնելով ներգրավված և համագործակցելիս՝ սովորողներն ավելի են խրախուսվում և ոգևորվում ընտանիքի և դպրոցի բարեկամական հարաբերություններից։ Ուսումնասիրելով ծնողական ժողովների դերն ու կարևորությունը ուսուցիչ- ծնող փոխադարձ համագործակցության տեսանկյունից՝ շատ կարևոր է, որ ծնողական ժողովները պարտադիր կազմակերպվեն նախապես մշակված պլանով, որը պետք է հետաքրքիր լինի ծնողի համար։Դասղեկը պետք է ունենա հստակ նպատակ , ներկայացնի խնդիրները, որոնք պետք է լուծվեն համատեղ ուժերով՝անչափ կարևորևելով ծնողի դերը։Կարելի է օգտվել նաև համակարգչային ցուցադրություններից՝որպես ծնողական ժողովի վերջնական ամփոփում։ Նշեմ մի քանի կանոններ,որոնք առաջարկում եմ կիրառել ծնողական ժողովների ընթացքում.

- Ծնողական ժողովները պետք է հրավիրել ծնողներին հարմար և նրանց հետ համաձայնեցված օրերին ։
- Ծնողները պետք է ծանոթ լինեն ժողովի օրակարգին ։
- Ծնողական ժողովի օրակարգը պետք է լինի հրատապ և տեղին։

- Ծնողների և դասղեկի շփումը պետք է լինի անմիջական՝էթիկայի կանոների պահպանմամբ։
- Ծնողական ժողովը պետք է լինի մանակավարժորեն լավ նախապատրաստված։
- Ծնողական ժողովը պետք է սկսել լավ տրամաբանությամբ և մեկուկես ժամից ավել չպետք է տևի։
- Նախ պետք խոսել դրական հարցերի շուրջ, հետո անցնել բուն խնդիրների քննարկմանը։
- Ծնողը պետք է համոզվի, որ դպրոցը պատրաստ է աջակցել իրեն օգնելու իր երեխային։
- Դասղեկը պետք է լինի անաչառ, բարյացական և ունենա մանակվարժական տակտի զգացում։

Որպեսզի ծնողական ժողովը լինի արդյունավետ և ծառայի իր նպատակին,անհրաժեշտ է այն կազմակերպել երեք փուլով.

<u>1-ին փուլ Նախապատրաստում</u>

- Ժողովի նպատակի ընտրություն
- Մասնակիցների կազմի ընտրություն
- Սովորեղների առաջադիմության թերթիկի նախապատրաստում
- Դասասենյակի ձևավորում
- Իրազեկում

<u>2-րդ փուլ անցկացում</u>

- Դասարանի աշակերտների առաջադիմության վերլուծություն
- Դասարանում տիրող սոցիալ-հոգեբանական մթնոլորտի ներկայացում
- Հոգեբանամանկավարժական խորհրդատվություն
- Կազմակերպչական աշխատանքների քննարկում
- Անհատական զրույց ծնողների հետ

<u>3-րդ փուլ Արդյունքների ամփոփում</u>

- <u>Կատարել եզրակացություններ</u>
- <u>Կայացնել որոշումներ</u>
- <u>Ճշտել ծնողներ կարծիքը ժողովի վերաբերյալ՝ նախապես նախապատրաստելով հարցաթերթիկներ ծնողների գնահատականների, հարցերի ,առաջարկությունների վերաբերյալ։</u>

Ծնողական ժողովի արդյունքների մասին անհրաժեշտ է տեղեկացնել տնօրինությանը:

Հաճախ անհրաժեշտ է լինում հանդիպել ծնողի կամ ծնողներից մի քանիսի հետ առանձին ՝ որևէ խնդրի լուծում տալու համար: Նման դեպքերում կարելի է լավ առաջադիմություն ունեցող աշակերտի ծնողին կամ ծնողներին խնդրել, որ թույլ տան իրենց երեխային այցելել դասընկերոջը՝ նրան օգնելու և դասերը սովորեցնելու հարցում:Նման դեպքերում սովորողներն ավելի են մտերմանում, և զարգանում են խմբով աշխատելու հմտություններ:Սովորողն ավելի շուտ է ընկալում ընկերոջ ասածը, և բացի այդ սովորողը իր չհասկացածը ավելի շուտ ընկերոջից կհարցնի, քան ուսուցչից:Իսկ բացատրող սովորողի մոտ նյութն ավելի կամրապնդվի:

Որպեսզի սովորող-ծնող-ուսուցիչ փոխադարձ համագործակցությունը ավելի մտերմիկ և ընկերական երանգ ստանա, կարելի է կազմակերպել համատեղ արշավներ, էքսկուրսիաներ կամ հանրօգուտ աշխատանքներ:

3.ԹԵՄԱՏԻԿ ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այս ժողովներն անցկացվում են որևէ կոնկրետ թեմայով, որն ունի առաջնահերթ կարևորություն տվյալ պահին:Ներկայացնեմ կոնկրետ թեմատիկ ծնողական ժողովի օրինակ, որի թեման է <<Օգնություն հիմնական դպրոցի շրջանավարտին ավագ դպրոցում հոսքային ընտրություն կատարելու հարցում>>, որն անհրաժեշտ է անցկացնել 9-րդ դասարանցիների և ծնողների հետ համատեղ տվյալ ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում: Այս ժողովի նպատակներն են.

.Ծնողներին տեղեկացնել ավագ դպրոցում հոսքային ուսուցման և 9-րդ դասարանում նախնական մասնագիտական պատրաստվածության մասին:

.Ծնողներին օգնել հաղորդակցվել իրենց երեխաների հետ՝նախնական մասնագիտական կողմնորոշման խնդիրների շուրջ:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Պատրաստել հարցաթերթիկներ ծնողների և սովորողների համար:Հարցաթերթիկում կարելի է ներառել սովորողներին ուղղված հետևյալ հարցերը.

1.Ինչ գիտես հոսքային ուսուցման մասին:

.Ունեմ որոշակի գիտելիքներ

.Ոչինչ չգիտեմ

2.9-րդ դասարանն ավարտելիս

.Կշարունակեմ ուսումն ավագ դպրոցում

.Կշարունակեմ ուսումը քոլեջում

.Դեռ չեմ որոշել

3.Առաջին հերթին ում հետ կխորհրդակցեիր մասնագիտական կրթության ընտրության վերաբերյալ.

.Դասղեկի

.Ծնողների

.Ընկերների

.Ինքս կորոշեի

Ծնողների համար նախատեսված հարցաթերթիկում կարելի է ներառել հետևյալ հարցերը.

1. Զրուցել եք արդյոք Ձեր երեխայի հետ՝ նրա ապագա մասնագիտության ընտրության շուրջ։

2.Խոսել եք արդյոք ուսումը շարունակելու հնարավորությունների և այլընտրանքների մասին;

3.Կարծում եք արդյոք , որ Ձեր երեխան կարող է ինքնուրույն կատարել հոսքի ընտրություն։

4.Համարում եք , որ Ձեր երեխայի ապագա մասնագիտության ընտրությունն ամբողջովին Ձեզանից է կախված։

5.Տեղյակ եք արդյոք, թե որ մասնագիտություններն են առավել պահանջված։

Հարցաթերթիկների լրացումից հետո կատարվում է արդյունքների քննարկում։Ցանկալի է,որ ծնողի և իր երեխայի վերջնական տեսակետներն համընկնեն։Այս հարցում մեծ դեր է խաղում դասղեկի ուղղորդումը՝ հիմնվելով սովորողի առաջադիմության և ընդունակությունների վրա։ Պետք է հաշվի առնվեն նաև սովորողի նախասիրություններն ու հակումները։ Հաջորդ քայլով անհրաժեշտ է, որ դասղեկը հանգամանալից ներկայացնի ծնողներին ու սովորողներին գործող կրթական հաստատությունները և դրանց ծրագրային առանձնահատկությունները,տեղեկացնի ընդունելության կարգի մասին, իրազեկի մասնագիտական կողմնորոշմանը նպաստող միջոցառումների մասին։Շատ կարևոր է, որ ծնողները ևս տեղյակ լինեն դպրոցական անցուդարձին,հետաքրքրվեն , թե մասնագիտական կողմնորոշմանն ուղղված ինչպիսի միջոցառումներ են անցկացվելու դպրոցում,,երեխայի հետ քննարկեն ծագած խնդիրները,նրբանկատորեն խորհուրդներ տան երեխաներին, կարևոր որոշումներ ընդունելիս իրենց օգնությունն առաջարկեն։Պետք չէ մասնագիտական կողմնորոշման հարցում անտեսել սովորողի հասակակիցների ազդեցությունը։ Տարիքային առանձնահատկություններով պայմանավորված՝ դեռահասներից շատերի համար ընկերների կարծիքն ավելի մեծ կշիռ ունի, քան ծնողներինը և ուսուցիչներինը։ Այդ իսկ պատճառով խորհուրդ է տրվում հաշվի առնել սովորողի ընտրության հարցում ընկերների ազդեցության գործոնը և այն,թե որքանով կարող է այդ ազդեցությունը դրական լինել։ Ամեն դեպքում պետք է նրբանկատ լինել,որ ակնհայտ բացասաբար չարտահայտվենք ընկերների մասին։ Ժողովի արդյունքների ամփոփումից հետո դասղեկը ևս մեկ անգամ կարևորվում է քննարկվող խնդիրը, նշելով, որ այդ հարցերի շուրջ քննարկումները կշարունակվեն մինչև ուսումնական տարվա ավարտը։

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այս ժողովի նպատակն է, հաշվի առնելով ծնողների կարծիքներն ու տալով նրանց ընտրության հնարավորություն, դասարանում համատող լուծել մի շարք կազմակերպչական խնդիրներ։Այդպիսի խնդիրները կարող են լինել տարաբնույթ, օրինակ՝ դասարանական միջոցառումների, էքսկուրսիաների, արշավների,բնության գրկում զբոսանքների, ցերեկույթների կազմակերպում,դասասենյակի, միջանցքի կամ վահանակի ձևավորում և այլն։Երբ քննարկումներն ավարտվում և աշխատանքները բաժանվում են, սկսվում են կազմակերպչական աշխատանքները։ Նմանատիպ ակտիվ աշխատանքներում ծնողների ներգրավվածությունը առավել դրական է ազդում սովորող- ուսուցիչ- ծնող փոխադարձ համագործակցության վրա ու ստեղծում շատ հաճելի և դրական մթնոլորտ։ Իրենց հերթին սովորողները մեծ ոգևորությամբ և աշխուժությամբ են

մասնակցում կազմակերպչական աշխատանքներին։ Իրենց կարծիքն ու ճաշակը հաշվի առնելու դեպքում սովորողներն առավել մեծ պատասխանատվությամբ են մոտենում յուրաքանչյուր հարցին։Նախորդ ուսումնական տարում վեցերորդ դասարանում սովորողների մայրիկների տոնին նվիրված տեսագրել էի մի փոքրիկ տեսահոլովակ, որտեղ սովորողները շնորհավորում և իրենց սրտի խոսքն էին հղում մայրիկներին։Տեսահոլովակը տարածել էի սոցիալական ցանցերում, որը հաճելի անակնկալ էր մայրիկների համար, իսկ երեխաները գոհ էին և ուրախ։ Խորհուրդ է տրվում նմանատիպ միջոցառումները կազմակերպել հնարավորինս շատ։

ԳԼՈՒԽ 3։ ՍՈՎՈՐՈՂ- ՈՒՍՈՒՑԻՉ- ԾՆՈՂ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ

Տարիների աշխատանքային փորձը ցույց է տվել, որ տարրական դպրոցում ծնողներն ավելի են ներգրավված ուսումնական գործընթացին։Հաճախակի ինքնակամ այցելում են դպրոց , և սովորող-ուսուցիչ- ծնող կապն ավելի ամուր է։

Միջին դպրոցում ներգրավվածությունը մեծացնելու համար Սևանի Վ.

Կարապետյանի անվան հ.3 հիմնական դպրոցը մշակեց հատուկ

ռազմավարություն, որը, կարծում եմ, ծնողին կապեց դպրոցի հետ։ Հանձնարարվեց միջին դպրոցի դասարանների դասղեկներին կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ ծնողների և սովորողների մասնակցությամբ։Կազմակերպվեցին արշավներ, էքսկուրսիաներ,ցուցահանդեսներ, միցույթներ, վարպետության դասեր և այլ միջոցառումներ։

Հինգերորդ դասարանների աշակերտները իրենց ծնողների հետ միացյալ ուժերով բեմադրեցին Հովհաննես Թումանյանի հեքիաթներից։Այնքան լավ էր ստացվել, որ մանկապարտեզի երեխաների համար նույնպես ներկայացրին հեքիաթները։

Վեցերորդ դասարանների դասղեկները կազմակերպեցին միջովառումներ <<Առողջ ապրելակերպ>> խորագրով, որին մասնակցեցին թե ծնողները, թե աշակերտները։ Ծնողները մեծ ոգևորությամբ էին մասնակցում և նախապատրաստական աշխատանքներին, և միջոցառմանը։

Յոթերորդ դասարաններում կազմակերպվեց սպորտլանդիա,որին մասնակցուն էին աշակերտները և ծնողները։Հաղթող թիմը պարգևատրվեց շնորհակալագրով։

Ութերորդ դասարանների ծնողները իրենց երեխաների հետ ներկայացրին հայկական ժողովրդական երգերն ու պարերը, իսկ իններորդ դասարանների աշակերտների և ծնողների մասնակցությամբ անցկացվեցին գրական ցերեկույթներ՝ նվիրված հայ դասական գրողներին, որոնց ընթացքում ծնողները և աշակերտները մեծ ոգևորությամբ արտասանում էին բանաստեղծությունները։

Այդ մի քանի ամիսների ընթացքում դպրոցում տիրում էր ոգևորություն, խանդավառություն, բոլորը շտապում էին իրենց հանձնարարությունները կատարել։Պետք է նշեմ,որ սկզբում ծնողները կաշկանդված էին, բայց հաղթահարեցին այդ կաշկանդվածությունը, սկսեցին մեծ ոգևորությամբ և առանց կաշկանդվելու ներկայացնել այն, ինչ հանձնարարված էր իրենց։Եթե նախկինում ծնողները իրենց երեխայի դպրոցական կյանքի միայն պասիվ հանդիսատեսն էին, ապա այժմ դառնում էին նրա ակտիվ մասնակիցները։Որոշ ծնողներ պատմեցին իրենց տպավորությունների մասին և պատմեցին, թե ինչպիսի խանդավառությամբ են պատրաստվել։Ուզում եմ ծնողների արտահայտած մտքերից մի քանիսը մեջբերել. <<Շատ նոր գիտելիքներ, հմտություններ ձեռք բերեցինք>>, <<Շփման արդյունքում ավելի լավ ճանաչեցինք դասղեկին,ավելի հանգամանորեն տեղեկացանք նրա և դպրոցի պահանջների մասին>>, <<ճանաչեցինք մեր երեխաներին նորովի>>, <<շփման արդյունքում ավելի լավ ճանաչեցինք ծնողներին>>,<<երգելիս,պարելիս, արտասանելիս և սպորտային խաղեր խաղալիս մտովի տեղափոխվեցինք մանկություն>>, <<կուզենայինք այս ծրագիրը շարունակական լիներ>>։

Ժամանակակից զարգացած տեխնիկական միջոցները ևս լայն ու բազմազան շփման հնարավորություն են ընձեռում։Շնորհիվ շուրջօրյա հասանելիության ապահովման, ծնողն ու ուսուցիչը օրվա յուրաքանչյուր վայրկյան հասանելի են միմյանց համար,որն էլ շատ կարևոր գործոն է և մեծ նշանակություն ունի ուսուցիչ- ծնող փոխհամագործակցության վրա։ Օրինակ՝ եթե սովորողը հետ է մնում կամ ինչ-որ խնդիր է առաջացել, չի կարելի սպասել այնքան, մինչև ծնողն ինքը կմոտենա,կամ այդ մասին բարձրաձայնել միայն որոշ ժամանակ անց՝ժողովի ընթացքում։Նմանատիպ խնդիրների դեպքում անմիջապես կապ ենք հաստատում ծնողի հետ .լինի դա հեռախոսով, էլեկտրոնային փոստով կամ սոցիալական ցանցի միջոցով։Սովորողն հաջողության կհասնի միայն այն դեպքում, երբ ճիշտ ժամանակին, փոխադարձ համագործակցելով, իրեն կուղղորդեն և ծնողը, և ուսուցիչը միաժամանակ։

Եվ որպես դասղեկ, և որպես ուսուցիչ այն հարթակում, որտեղ ծնողների խումբ է ստեղծված, հաճախակի ուղարկում եմ տեղեկատվություն՝ անհատական և խմբային։Այն է՝ ինչ զարմանալի կամ գովելի բան է արել երեխան դասի

ժամանակ։Ամենափոքրիկ բանն անգամ կարող է մեծ փոփոխություն մտցնել։Ամենափոքրիկ գովասանքն անգամ մեծ ոգևորություն և պատասխանատվություն է առաջացնում թե ծնողի, թե սովորողի մոտ։Իսկ ժամանակակից տեխնոլոգիաները խնայում են ուսուցչի և ծնողի և ժամանակը, և տարածությունը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտության արդյունքում ինձ համար առավել պարզ դարձավ, որ երբ ծնողը ակտիվ և փոխադարձ համագործակցում է ուսուցչի հետ, ապա այդ համագործակցությունից սովորողի մոտ բարձրանում է առաջադիմության,զարգացվածության մակարդակը,բարելավվում է հաճախելության ցոիցանիշը։ Սովորողների մոտ զարգանում են սոցիալական կարողություններ , և նրանց վարքը դառնում է դրական ինչպես դպրոցում, այնպես էլ տանը։Ուստի և՛ ծնողը,և՛ ուսուցիչը անընդհատ, փոխադարձ համաձայնությամբ պետք է թարմացնեն համագործակցության մեթոդները և կիրառեն նոր հմտություններ՝ սովորողի ուսման որակը բարձրացնելու համար։Թվարկված գործոններն հանդիսանում են հենց այն կարևոր գործոնները, որոնք ազդում են սովորողի վրա և դպրոցում սովորելիս, և ապագա մասնագիտական գործունեության ընթացքում։Երբ սովորողի առջև դրվում է միևնույն պահանջը և տանը, և դպրոցում, սովորողն ինքնին դառնում է ավելի կարգապահ , կազմակերպված և պատասխանատու։ Ծնողի և ուսուցչի փոխադարձ համագործակցություն նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն սովորողի հաջողությունների և կրթության որակի բարձրացմանը, ինչպես տանը, այնպես էլ դպրոցում։Այն միավորում է ծնողներին ու ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն և ազդեն սովորողի առաջադիմության վրա։Ծնողը պետք է ունենա մեծ կամք, իսկ ուսուցիչը պետք է ամեն ինչ անի , որ ծնողի մոտ բարձրանա մանկավարժական կուլտուրան։

Հետազոտական աշխատանքս կատարել եմ սեփական դիտարկումների հիման վրա և վերլուծության մեթոդով։Ինչպես ենթադրում էի, արդարացան իմ սպասելիքները, դրանք են՝ սովորողի հաճախելիության ապահովում, լավ վարք, բարձր առաջադիմություն , վստահություն ուսման և դպրոցի

նկատմամբ։Սովորողներն էլ իրենց հերթին մոտիվացվում են սովորել այնպիսի միջավայրում, որտեղ իրենց ծնողին ընդունում են, հարգում, գնահատում, համարում են գործընկեր,տալիս են մասնակցության հնարավորություն դպրոցական միջոցառումներին, շփվելու հնարավորություն դպրոցի անձնակազմի հետ։Որպես վերլուծության արդյունք՝ ուզում եմ առանձնացնել այն բոլոր <<օգուտները>>, որոնք ստանում են ուսուցիչ- ծնող-սովորող փոխադարձ համագործակցության ընթացքում յուրաքանչյուրն իր հերթին.

Օգուտ ուսուցչին

. Ուսուցիչը ստանում է սպառիչ տեղեկություն յուրաքանչյուր սովորողի մասին, ըստ այդմ ցուցաբերում է անհատական մոտեցում և ստանում ցանկալի արդյունք։

. Բարձրանում է ուսուցչի ինքնավստահությունը և հարգանքը իր մասնագիտության նկատմամբ։

Օգուտ սովորողին

. Անկախ սովորողի սոցիալ- տնտեսական կարգավիճակից, երբ ծնողն ու ուսուցիչը փոխադարձ համագործակցում են,սովորողի մոտ բարձրանում է նոր ձեռքբերումների մակարդակը։

. Սովորողն ավելի դրական է տրամադրվում դպրոցի հանդեպ։

. Մեծանում է վստահությունը սեփական անձի և ապագայի հանդեպ։

Օգուտ ծնողին

. Սկսում է ավելի լավ հասկանալ ու ճանաչել իր երեխային։

. Սկսում է ավելի շատ ուշադրություն հատկացնել երեխայի սոցիալական և մտավոր զարգացման վրա։

. Ավելի շատ ուշադրություն է դարձնում իր սեփական գիտելիքները թարմացնելու և զարգացնելու վրա, աշխատում է զարգացնել նոր հմտություններ։

. Սկսում է ավելի վարժ և վստահ տիրապետել իր երեխայի վիճակի մասին տեղեկատվությանը և ժամանակին է լուծում խնդիրը՝ուսուցչի հետ միասին։

Օգուտ դպրոցին

.Դպրոցն ստանում է ավելի մեծ աջակցություն ծնողների կողմից։

. Հասարակության մեջ բարձրանում է դպրոցի հեղինակությունը։

. Տարեկան կտրվածքով բարձրանում է դպրոցի բոլոր ցուցանիշների մակարդակը։

Ամենակարևորը, <<կրթության եռանկյունին>> ծնողների, ուսուցիչների և սովորողների փոխհամագործակցությունն է,որը պետք է լինի ուժեղ, կենտրոնացած և դրական՝աջակցելու սովորողների ուսմանը։



<<Մեր երեխաները մեր ծերությունն են։ Ճիշտ դաստիարակությունը մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակությունը՝ մեր ապագա վիշտը, մեր

արտասուքները, դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև,ամբողջ երկրի առջև>>:

Ա. Մակարենկո

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու. Ա. , Սահակյան Ա. Ս.<<Մանկավարժություն>>, <<Մանկավարժ>>, 2005թ.

2. Բոլդիրև Ն. Ի. <<Դասղեկ>>, Երևան 1974թ.

3. ԿԱԻ <<Դաստիարակչական աշխատանքը դպրոցում>>, Երևան 2012թ.

4 Մախչանյան Հ. <<Համագործակցային մանկավարժություն>>, Երևան 1981թ.

5. Մելքումյան Մ.<<Մակարենկոն ընտանեկան դաստիարակության մասին>>, Երևան 1985թ.

6. Մուրադյան Ռ.<<Դասղեկ>> ,Երևան 2007թ.